

ԷԼԵՆ ՔԵՐՈՐՅԱՆ

ԿՈՆՖԼԻԿՏԻ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ ցանկացած սոցիալական կոնֆլիկտ, մասնա առաջ, ենթադրում է նրանում ներգրավված կողմեր, որոնք կարող են ներկայացված լինել անհատներով, խմբերով, կազմակերպություններով կամ պետություններով: Կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի ուսումնասիրությունը կոնֆլիկտների վերլուծության և լուծման գիտակարգի առանցքային հիմնահարցերից մեկն է: Ընդ որում, կոնֆլիկտների ուսումնասիրությունը միջառարկայական հետազոտությունների բնագավառ է ու տարբեր գիտակարգերի՝ սոցիոլոգիայի, միջազգային հարաբերությունների, հոգեբանության և այլն շրջանակներում կոնֆլիկտի կողմերին ու երրորդ կողմերին առնչվող հիմնահարցերը մեկնաբանվում են տարբեր կերպ: Կիրառվող մոտեցումների բազմազանությունը արդիական է դարձնում կոնֆլիկտի կողմերի և երրորդ կողմերի վերլուծության մեթոդաբանական շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը:

Ձ. Լաուեն, խոսելով «կոնֆլիկտի կողմ» և «երրորդ կողմ» հասկացությունների մասին, սահմանում է դրանցից առաջինը երկրորդի համատեքստում: «Առաջին և երկրորդ կողմերն,- ըստ նրա,- ունեն ուղղակի նպատակներ կամ ուղղակի շահեր կոնֆլիկտում կամ դրա ելքերում» (16. 18): Ինչ վերաբերվում է «երրորդ կողմ» հասկացության սահմանմանը, նա նշում է, որ «երրորդ կողմը սոցիալական գիտության վերլուծության եզրույթ է, այլ ոչ թե մաթեմատիկական հասկացություն: Այն բառացիորեն չի նշանակում երրորդ կողմ իրավիճակում, որում կան երկու այլ կողմեր: ...երրորդ կողմը չունի ուղղակի շահեր: Նա, անշուշտ, ունի ինչ-որ շահեր (օրինակ, հեղինակություն կամ պրոֆեսիոնալիզմ), սակայն նրա վրա չի ազդում ռեսուրսների բաշխումը, ուժի գործադրումը, նոր դերերի կամ ելքերի այլ տեսակների սահմանումը, որոնք կարող են տեղի ունենալ կոնֆլիկտի ընթացքում» (16. 17-18): Այդպիսով, Ձ. Լաուեն «կոնֆլիկտի կողմ» հասկացությունը սահմանում է նեղ իմաստով, քանի որ վերջինիս տակ նկատի է առնում կոնֆլիկտում միայն ուղղակի շահեր ունեցողներին, իսկ «երրորդ կողմ» հասկացությունը հեղինակի կողմից կիրառվում է լայն իմաստով՝ ներառելով կոնֆլիկտում անուղղակի շահերով բնութագրվողներին:

Ի հակադրություն Զ. Լաուին, Փ. Վեյրը «կոնֆլիկտի կողմ» հասկացությունը սահմանում է լայն իմաստով, ըստ որի, կոնֆլիկտի կողմերը «...կոնֆլիկտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընդգրկված և նրա ելքում նշանակալից շահեր ունեցող որոշում կայացնող միավորներն են» (15. 161): Խոսելով կոնֆլիկտի կողմերի մասին՝ հեղինակն առանձնացնում է. (1) հիմնական կողմեր, «...որոնք նպատակները հանդիսանում են կամ նրանց կողմից ընկալվում են որպես անհամատեղելի և, որոնք ուղղակիորեն փոխազդում են՝ հետապնդելով այդ համապատասխան նպատակները», (2) երկրորդական կողմեր, որոնք «...ունեն անուղղակի շահեր վեճի ելքում, սակայն նրանք չեն համարում իրենց ուղղակիորեն ներգրավված» և (3) շահագրգիռ¹ երրորդ կողմեր, որոնք «...շահագրգռված են կոնֆլիկտի հաջող լուծման² մեջ»-(15. 161): Այդպիսով, կոնֆլիկտի հիմնական կողմերը, ի տարբերություն երկրորդական կողմերին, քննադրվում են կոնֆլիկտում ուղղակի շահերի առկայությամբ, չնայած հեղինակը նշում է, որ կոնֆլիկտի զարգացման ընթացքում երկրորդական կողմերը կարող են դառնալ հիմնական կողմեր և հակառակը: Ինչ վերաբերվում է կոնֆլիկտի երրորդ կողմերին, ապա, ըստ նրա, «կոնֆլիկտում ներգրավված կողմերը վստահում են *շահագրգիռ կամ չեզոք երրորդ կողմերին*, որոնք կարող են աջակցել հաղորդակցություններին, միջնորդ հանդիսանալ վեճում կամ տրամադրել ֆինանսական ռեսուրսներ սահմանափակության խնդիրը մեղմացնելու համար» (15. 163): Այսինքն՝ երրորդ կողմերի տակ հեղինակը նկատի է առնում այնպիսի երրորդ ուժեր, որոնք միջամտում են կոնֆլիկտին՝ վերջինիս լուծմանը նպաստելու համար, այլ ոչ թե կողմերից մեկին օգնելու նպատակով, ինչպես ակտիվիստները և փաստաբանները (որոնք Զ. Լաուի³ կողմից առանձնացվում են որպես կոնֆլիկտի երրորդ կողմի դերեր) կամ էլ կոնֆլիկտը հրահրելու և

¹ «Շահագրգիռ» բառն այս համատեքստում նշանակում է. որ երրորդ կողմը, անկախ կոնֆլիկտի կողմերի նկատմամբ անկողմնակալ լինելու հանգամանքից, հետաքրքրված է կոնֆլիկտի լուծման մեջ:

² Չնայած «կոնֆլիկտի լուծում» հասկացությունը հանդիսանում է հավաքական և իր մեջ պարունակում է տարբեր իմաստներ, այսինքն՝ վերաբերվում է (1) մասնագիտական գործունեության բնագավառին, (2) մարդկանց կողմից իրականացվող գործունեությանը, ովքեր կարող են օգտագործել կամ չօգտագործել հասկացությունը կամ նույնիսկ չգիտակցել այն, (3) կոնֆլիկտի հիմնախնդիրների բացահայտմանն ու կոնֆլիկտի կողմերին փոխադարձ բավարարող համաձայնության նվաճմանը, (4) կոնֆլիկտի փոփոխություններին հանգեցնող գործընթացի ընթացքին կամ միտմանը, (5) գործընթացի ավարտին (19. 21), այստեղ այն կիրառվում է նեղ իմաստով, ըստ որի կոնֆլիկտի երրորդ կողմի նպատակն է աջակցել կոնֆլիկտի առաջացումը պայմանավորող հիմնախնդիրների բացահայտմանը և կողմերին փոխադարձ բավարարող համաձայնության նվաճմանը:

³ Զ. Լաուն առանձնացնում է երրորդ կողմերի հինգ հիմնական դերեր՝ ակտիվիստ, փաստաբան, միջնորդ, հետազոտող և ուժարար (դատավոր, արքիտր և ոստիկան) (16. 26-28):

նրա զարգացմանը նպաստելու համար, ինչպես, սաղորիչները և կազմակերպիչները (6, 16): Իրականում, ինչպես աջակիցները և փաստաբաններն, այնպես էլ սաղորիչները և կազմակերպիչներն իրենցից ներկայացնում են երկրորդական կողմեր:

Ի տարբերություն Ջ. Լաուին, ով «կոնֆլիկտի կողմ» հասկացության տակ հասկանում է միայն կոնֆլիկտում ուղղակի շահեր ունեցող կողմերին և ի հակադրություն Փ. Վեյրին, ով «կոնֆլիկտի կողմ» հասկացության տակ նկատի է առնում կոնֆլիկտի ոչ միայն հիմնական և երկրորդական կողմերին, այլ նաև երրորդ կողմերին, «*կոնֆլիկտի կողմ*» հասկացության տակ նպատակահարմար է հասկանալ կոնֆլիկտի հիմնական և երկրորդական կողմերին⁴, քանի որ վերջիններս հանդիսանում են կոնֆլիկտում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընդգրկված և բնութագրվում նրա ելքում համապատասխանաբար ուղղակի կամ անուղղակի շահերի առկայությամբ:

Ինչ վերաբերվում է «երրորդ կողմ» հասկացությանը, ապա այն հարկ է դիտարկել «կոնֆլիկտի կողմ» հասկացությունից զատ, քանի որ երրորդ կողմը կարող է ունենալ կոնֆլիկտի ելքում ինչ-որ շահեր, օրինակ, ցանկանալով, հաստատել խաղաղություն իր կողմից վերահսկվող միջավայրում, ինչպես, ղեկավարը ենթակամների միջև կոնֆլիկտում, քանի որ կոնֆլիկտը բացասաբար է անդրադառնում աշխատանքային մթնոլորտի և, հետևաբար, աշխատանքի արդյունավետության վրա, այնպես էլ կարող է չունենալ որևէ շահ կոնֆլիկտի ելքում, ինչպես, քաղաքացիական բնույթի վեճ քննող դատավորը կամ գույքային կոնֆլիկտ քննող արբիտրը, ովքեր կոչված են լուծում տալ կոնֆլիկտին կամ էլ միջնորդը, ում նպատակն է աջակցել կոնֆլիկտի կողմերին՝ հասնելու վիճելի հիմնախնդիրների վերաբերյալ փոխադարձ բավարարող համաձայնության: Ավելին, «*երրորդ կողմ*» հասկացության տակ պետք է հասկանալ կոնֆլիկտի հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող կամ էլ, ընդհանրապես, չառնչվող երրորդ ուժ՝ անձ, խումբ, կազմակերպություն կամ պետություն, որն, անկախ անկողմնակալ լինելու հանգամանքից, կոչված է նպաստել կոնֆլիկտի լուծմանը:

Երրորդ կողմերի հետագա վերլուծությունը ենթադրում է նաև այնպիսի հիմնահարցերի քննարկում, ինչպիսիք են վերջիններիս միջամտության անհրաժեշտությունը, արդյունավետ միջամտության պայմանները, երրորդ կողմերի

⁴ Հարկ է նշել, որ կոնֆլիկտի կողմերը կարող են նաև ներկայացված լինել միայն հիմնական կողմերով (22):

կողմից ստանձնվող հնարավոր դերերը, ինչպես նաև մի դերից մյուսին անց-
նելու հնարավորությունները:

Անդրադառնալով «միջամտություն» հասկացության մեկնաբանմանը՝
նշենք, որ, ըստ Ք. Արգյուրիսի, վերջինս նշանակում է «ներթափանցել հարա-
բերությունների ընթացիկ համակարգ, հայտնվել անհատների, խմբերի կամ
օբյեկտների միջև՝ նրանց օգնելու նպատակով», ընդ որում, ենթադրվում է, որ
հարաբերությունների «...համակարգը գոյություն ունի անկախ միջամտողից»
(9. 15):

Երրորդ կողմի միջամտության անհրաժեշտությունը հիմնավորվում է երկու
հանգամանքով: Նախ և առաջ, կոնֆլիկտի կողմերը, բնութագրվելով մտածո-
ղության փաստարկային ոճով, որը պայմանավորված է ավանդույթով, ուսուց-
մամբ և ինքնագոհությամբ, հազվադեպ ունեն անհրաժեշտ հմտություն կամ
փորձ հիմնախնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում և կառուցողա-
կան ոճ ցուցաբերելու համար: Երկրորդ, կոնֆլիկտի կողմերը, նույնիսկ շատ
ցանկանալու դեպքում, պարզապես, ի վիճակի չեն կատարել որոշակի մտածո-
ղական գործողություններ, քանի որ դրանք չեն համաձայնեցվում կոնֆլիկտում
նրանց դիրքորոշումների հետ (10):

Զնայած երրորդ կողմը կարող է իրականացնել միջամտություն ինչպես
կոնֆլիկտի կողմերի կամ նրանցից մեկի խնդրանքով, այնպես էլ սեփական
նախաձեռնությամբ, վերջինիս արդյունավետ միջամտության համար պետք է
բավարարվեն մի քանի պայմաններ: Նախ և առաջ, կոնֆլիկտի կողմերը պետք
է հայտնեն կոնֆլիկտը լուծելու պատրաստակամություն: Երկրորդ, պետք է
առկա լինի կոնֆլիկտի կողմերի համար ընդունելի ֆորում, որը, բառացիորեն,
ենթադրում է կողմերի համար հարմար տեղ հարմար պայմաններով և հարմար
միջամտող: Երրորդ, միջամտող երրորդ կողմը պետք է լինի հեղինակավոր և
վայելի կողմերի վստահությունը, որպեսզի կողմերը թույլ տան նրան մասնակ-
ցել կոնֆլիկտի քննարկմանը (16): Զորրորդ, երրորդ կողմը պետք է լինի
մշակութային իրազեկ, այսինքն՝ կիսի միևնույն մշակութային միջավայրը կոնֆ-
լիկտի կողմերի հետ (17): Հինգերորդ, երրորդ կողմը պետք է ունենա գերա-
զանց հաղորդակցական հմտություններ, օժտված լինի խորաթափանցությամբ
և ստեղծագործական մտածողությամբ: Վեցերորդ, նա պետք է կարողանա վե-
րահսկել գործընթացը, այսինքն՝ չպետք է թույլ տա, որ կոնֆլիկտը շարունակի
զարգանալ ապակառուցողական ճանապարհով և պետք է ուշադրությունը բնե-
ռի կոնֆլիկտը պայմանավորող հիմնախնդիրների վրա: Եվ, յոթերորդ, երրորդ
կողմը պետք է նպաստի կոնֆլիկտի կառուցվածքային տարրերի ու դրանց
բաղադրիչների փոխակերպմանը, որոնք կհանգեցնեն կոնֆլիկտի լուծմանը:

Մասնավորապես, երրորդ կողմի միջամտությունը կարող է փոխել կոնֆլիկտի կողմերի միջև ուժերի հավասարակշռությունը, կոնֆլիկտի դրսևորումը, օգնել կողմերին՝ փոխելու նրանց նպատակները կամ ռեսուրսների սահմանափակության ընկալումը, փոխկախվածությունը և այլն (15):

Սովորաբար կոնֆլիկտի կողմերը կամ նրանցից մեկը դիմում է երրորդ կողմերին այն դեպքերում, երբ. (1) առկա է ձգձգված կոնֆլիկտ, որում բոլոր փաստարկները, ուժերը, միջոցները սպառված են, սակայն ելք չկա, (2) կոնֆլիկտի կողմերն ունեն անհամատեղելի նպատակներ և չեն կարողանում գտնել շփման ընդհանուր եզրեր, (3) իրավական նորմերը կամ կոնֆլիկտի լուծման մեջ վճռական հանդիսացող մյուս չափանիշները մեկնաբանվում են տարբեր կերպ, (4) կողմերից մեկին հասցվել է լուրջ վնաս և նա պահանջում է մյուս կողմի նկատմամբ պատժամիջոցներ, (5) կոնֆլիկտի կողմերի համար կարևոր է պահպանել լավ հարաբերություններ, կոնֆլիկտն ուժգին չէ, սակայն նրանք չեն կարողանում գտնել փոխադարձ ընդունելի լուծում և (6) կողմերը եկել են ժամանակավոր համաձայնության, սակայն վերջինիս կատարման նկատմամբ անհրաժեշտ է արտաքին օբյեկտիվ վերահսկողություն:

Երրորդ կողմի ինքնուրույն միջամտությունը կոնֆլիկտին անհրաժեշտ է այն իրավիճակներում, երբ. (1) տեղի է ունենում կոնֆլիկտային իրադարձությունների վտանգավոր էսկալացիա, գոյություն ունի բռնության կիրառման անմիջական վտանգ, (2) կողմերից մեկի կողմից կենտրոնացված ձևով կիրառվում է բռնություն, (3) երրորդ կողմին անձնապես ձեռնառու չէ կոնֆլիկտը, (4) կոնֆլիկտը բացասաբար է ազդում երրորդ կողմի կողմից վերահսկվող միջավայրի վրա և (5) կոնֆլիկտի կողմերը չեն եկել համաձայնության, իսկ երրորդ կողմը հնարավորություն ունի բավարարել նրանց պահանջները (6. 521):

Ինչ վերաբերվում է երրորդ կողմերի դասակարգման, ապա մասնագիտական շրջանակներում ընդունված է, նախ և առաջ, առանձնացնել պաշտոնական և ոչ պաշտոնական երրորդ կողմեր:

Պաշտոնական երրորդ կողմերի միջամտությունը, ժ. Ֆուլգերի և նրա գործընկերների համաձայն, ենթադրում է երրորդ կողմերի «...պաշտոնական աջակցություն, որը լիազորում է իրականացնել որոշակի միջամտություններ յուրահատուկ կոնֆլիկտների դեպքում» (13. 257): Նման դերերը, որպես կանոն, հաստատվելով օրենքներով, ավանդույթներով կամ կազմակերպության կանոններով, բնութագրվում են հստակության և կազմակերպվածության, այսինքն՝ ինստիտուցիոնալացման բարձր մակարդակով և, որպես կանոն, կրում են ժամանակավոր բնույթ: Մասնավորապես, պաշտոնական երրորդ կողմերի դերերում կարող են հանդես գալ. (1) միջազգային կազմակերպությունները, ինչպես

ԵԱԳԿ Մինսկի խումբը Ղարաբաղյան կոնֆլիկտում, (2) առանձին պետությունները, օրինակ, Շվեյցարիան 2009թ. հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և սահմանի բացմանն ուղղված բանակցություններում, (3) իրավական ինստիտուտները, օրինակ, դատարանը, արբիտրաժը կամ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, (4) կառավարական կամ այլ պետական հանձնաժողովները, ինչպես, որոշ ընտանեկան կոնֆլիկտների դեպքում խնամատարության և հոգաբարձության մարմինները ԴՀ-ում, (5) իրավապահ մարմինների ներկայացուցիչները, ինչպես, թաղային ոստիկանը հարևանների միջև կենցաղային վեճում, (6) հասարակական կազմակերպությունները, օրինակ, Կոնֆլիկտների Կանխման Եվրոպական Կենտրոնը Յուլանդիայում և (7) մասնագետ միջնորդները, իրավաբանները, սոցիալական աշխատողներն ու հոգեբանները:

Ոչ պաշտոնական երրորդ կողմերը, ըստ Ժ. Ֆուլգերի և Նրա գործընկերների, չունենալով կոնֆլիկտներին միջամտելու պաշտոնական լիազորություններ, միջամտում են այնքանով, որքանով կոնֆլիկտի կողմերը կամ կողմերից մեկը համարում է, որ Նրանք կարող են միջամտել կոնֆլիկտին (13. 257): Այսպիսի ոչ պաշտոնական միջամտությունները, բնութագրվելով երրորդ կողմերի դերերի հստակության և կազմակերպվածության ցածր մակարդակով, հանդիսանում են երրորդ կողմերի տիրապետության տակ գտնվող այնպիսի ռեսուրսների արդյունք, ինչպիսիք են միջամտելու հմտությունը կամ էլ երրորդ կողմերի շարունակական հարաբերությունները կոնֆլիկտի կողմերի հետ:

Ոչ պաշտոնական երրորդ կողմերի դերերում կարող են հանդես գալ. (1) հայտնի մարդիկ, ովքեր հասել են հաջողությունների հասարակայնորեն նշանակալից գործունեության մեջ, օրինակ, քաղաքական գործիչները, նախկին պետական գործիչները, (2) կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները, (3) կազմակերպությունների ղեկավարները, (4) միջին օղակի ղեկավարները, մենեջերները, (5) տարբեր մակարդակի սոցիալական խմբերի ոչ պաշտոնական առաջնորդները, (6) տարիքով մեծերը՝ ծնողները, տատիկները, պապիկները, դաստիարակները, ուսուցիչները և (7) ընկերները, հարևանները, պարզապես, կոնֆլիկտի վկաները (6. 520):

Գիտական շրջանակներում ընդունված է երրորդ կողմերին նաև դասակարգել՝ հիմք ընդունելով կայացվող որոշման նկատմամբ վերջիններիս վերահսկողության մակարդակը: Ամփոփելով մասնագիտական գրականությունում վերոհիշյալ սկզբունքով երրորդ կողմերի դասակարգման վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները՝ կարելի է առանձնացնել երրորդ կողմերի տասնմեկ դեր:

Նախ և առաջ, երրորդ կողմը կարող է բնութագրվել որոշման նկատմամբ վերահսկողության առավելագույն մակարդակով՝ ունենալով կոնֆլիկտի լուծման տարբերակները սահմանելու ամենամեծ հնարավորությունները: Երրորդ կողմի այս դերի առանձնացման համար ուսական գրականությունում սովորաբար օգտագործվում է «միջնորդ դատավոր» (третейский судья) եզրույթը: Մասնավորապես, ըստ Ա. Անցուպովի և Ա. Շիպիլովի, «միջնորդ դատավորն ուսումնասիրում է խնդիրը, լսում է երկու կողմերին և կայացնում վճիռ, որը չի վիճարկվում» (6. 521): Իրականում, «միջնորդ դատավոր»⁵ հասկացությունը հանդիսանում է անգլերեն «arbitrator» բառի թարգմանությունը և իր բովանդակությամբ նույնական է արևմուտյան գրականության մեջ լայնորեն կիրառվող «արբիտր» հասկացությանը, որի տակ նկատի է առնվում *երրորդ կողմ, ում կողմից կայացված որոշումները հանդիսանում են կատարման համար պարտադիր*: Ժ. Ֆուլերը և նրա գործընկերները երրորդ կողմի այս դերը բնութագրում են հետևյալ կերպ. «Արբիտրը լիազորված է լսել գործի բոլոր կողմերին, քննարկել այն կողմերից յուրաքանչյուրի հետ և, այնուհետև, կայացնել վերջնական որոշում վեճի կարգավորման վերաբերյալ, ինչպես անում է դատավորը դատական գործերում: Դեպքերի մեծամասնությունում, կողմերը օրենքով կամ նախօրոք ձեռքբերված համաձայնությամբ հարկադրված են ընդունել արբիտրի կողմից կայացված վճիռը» (13. 258): Այդպիսով, երրորդ կողմի այս դերը ենթադրում է, որ պարտավորեցնող արբիտրաժի (binding arbitration) շրջանակներում գործող արբիտրի կողմից կայացված որոշումը հնարավոր չէ վիճարկել: Ի դեպ, «ՀՀ օրենքը Առևտրային Արբիտրաժի մասին», որն ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին սահմանում է, որ առևտրային արբիտրաժի շրջանակներում գործառնող արբիտրների կողմից կայացված որոշումները պարտադիր են կատարման համար (1. 15):

Երրորդ կողմը կարող է հանդես գալ *դատավորի* (judge) դերում, ով լսում է կողմերին և կայացնում որոշում, որը նրանք պետք է կատարեն (16. 28): Այսինքն՝ դատավորը նույնպես օժտված է կոնֆլիկտի լուծման վերաբերյալ որոշումներ կայացնելու մեծ իրավասություններով, չնայած նրա կողմից կայացված որոշումները կարող են բողոքարկվել դատական համակարգի վերադաս ատյաններում: Մասնավորապես, «ՀՀ օրենքը Դատակազմության մասին» ենթադրում է, որ (առաջին ատյանի դատարանի) դատավորի կողմից կայաց-

⁵ «Միջնորդ դատավոր» հասկացության կիրառումը նպատակահարմար չէ այնքանով, որքանով այն իր մեջ պարունակում է «միջնորդ» և «դատավոր» հասկացությունները, որոնք ենթադրում են երրորդ կողմի սկզբունքորեն տարբեր դերեր (4.112-113):

ված որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում կողմերը կարող են վիճարկել այն վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում (5. 39-40, 42):

Որոշ հեղինակներ երրորդ կողմի դերերի մեջ առանձնացնում են *ոստիկանի* (police) դերը: Ըստ Ջ. Լաուի, ոստիկանը կարող է ուժի կիրառման միջոցով վերջ դնել միմյանց նկատմամբ կողմերի կողմից գործադրվող բռնությանը և սահմանել կոնֆլիկտի կողմերի նկատմամբ պատժամիջոցներ (16. 28): Այդպիսով, ոստիկանը նույնպես օժտված է կոնֆլիկտի լուծման վերաբերյալ որոշումներ կայացնելու մեծ լիազորություններով:

Կախված կայացվող որոշման նկատմամբ երրորդ կողմի վերահսկողության մակարդակից՝ գիտական գրականությունում խաճախ առանձնացվում է նաև *արբիտրի* դեր, *ուն կողմից կայացվող որոշումները պարտադիր չեն կատարման համար*: «Արբիտրը, - ըստ Ա. Սնցուպովի և Ա. Շիպիլովի, - նույնպես ունի նշանակալից լիազորություններ: Նա ուսումնասիրում է կոնֆլիկտը, քննարկում է այն մասնակիցների հետ, իսկ այնուհետև կայացնում վերջնական որոշում, որը պարտադիր է կատարման համար: Սակայն կողմերը կարող են չհամաձայնվել որոշման հետ և բողոքարկել այն վերադաս ատյաններում» (6. 521-522): Իրականում, հեղինակների կողմից արբիտրի դերի նման մեկնաբանությունը բնորոշում է դատավորի դերը, մինչդեռ արևմուտքում, պարտավորեցնող արբիտրաժի շրջանակներում գործող արբիտրից բացի, առանձնացվում է նաև արբիտրի դեր, ուն կողմից կայացվող որոշումները պարտադիր չեն կատարման համար: Ժ. Ֆոլգերի և նրա գործընկերների կարծիքով, չպարտավորեցնող արբիտրաժի (nonbinding arbitration) դեպքում «...երրորդ կողմը հետևում է նույն ընդհանուր գործընթացին, սակայն արբիտրի որոշումը չի հանդիսանում այնպիսին, որը կողմերը պարտավոր են ընդունել օրենքով կամ նախօրոք ձեռքբերված համաձայնությամբ: Ավելին, արբիտրի որոշումը հանդիսանում է չեզոք կարծիք, որը կողմերը կարող են հաշվի առնել» (13. 258): Այսինքն՝ երրորդ կողմի այս դերը ենթադրում է, որ չպարտավորեցնող արբիտրաժի սահմաններում գործառնող արբիտրը կայացնում է խորհրդատվական բնույթի որոշում, որը կողմերը կարող են կատարել կամավոր: «ՀՀ օրենքը միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին», որը գործում էր 1999-2006թթ., նախատեսում էր խորհրդատվական բնույթի որոշումների կայացման լիազորություններով օժտված արբիտրների գործունեություն (5. 23, 4. 115):

Երրորդ կողմերի դերերի վերլուծության համատեքստում հիմնավորված է հանդիսանում *օմբուդսմենի* (ombudsmen) դերի առանձնացումը: Դասական իմաստով օմբուդսմենը կամ մարդու իրավունքների պաշտպանն իրենից ներ-

կայացնում է պետական գործիչ, ով «...կոչված է պաշտպանել մարդու իրավունքները պետության հետ նրա փոխհարաբերություններում» (7. 89): Այսպես, «ՀՀ օրենքը մարդու իրավունքների պաշտպանի մասին» ենթադրում է, որ, լիազորված լինելով ուսումնասիրել մարդու, այդ թվում նաև քաղաքացու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները, մարդու իրավունքների պաշտպանը սահմանափակվում է կոնֆլիկտի կողմերին միայն առաջարկություններ անելով և խորհրդատվություն տրամադրելով, այդպիսով, չբնութագրվելով վերջնական որոշումներ կայացնելու իրավասություններով: Ընդ որում, վերջինս իրավասու է քննել միայն պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման դեպքերը (2):

Միևնույն ժամանակ, բացի շվեդական ծագում ունեցող «օմբուդսմեն» եզրույթից, երբեմն կիրառվում է նաև «*օմբուդն*» (ombuds) կամ «*օմբուդսանձ*» (ombudsperson) հասկացությունը, որի տակ, գլխավորապես, ԱՄՆ-ում նկատի է առնվում «...երրորդ կողմ, ով ուսումնասիրում է կազմակերպություններում առաջացող բողոքները» (23. 18): Վերջինս նշանակվելով մասնավոր կազմակերպության կողմից՝ աշխատանքային գործունեության ընթացքում առաջացող հիմնախնդիրներն ուսումնասիրելու, վեճերը կանխելու կամ դրանց լուծմանը նպաստելու համար, կարող է տալ տվյալ կազմակերպության ղեկավարությանը՝ փոփոխություններ կատարելու վերաբերյալ կառուցողական խորհուրդներ, առանց հրապարակելու բողոքող աշխատողի ինքնությունը (21. 204):

Երրորդ կողմի դերերի մեջ ընդունված է առանձնացնել նաև (հաճախ չեզոք փորձագետ հանդիսացող) *փաստեր բացահայտողի* (fact-finder) դերը, որի էությունը կայանում է մասնավոր վեճի վերաբերյալ փաստերն անկախորեն բացահայտելու մեջ (18. 43-44): Մ. Վոլփերի և Փ. Մայդայի համաձայն, «փաստեր բացահայտողները հանդիսանում են երրորդ կողմեր, ովքեր հավաքում են վիճող կողմերի համար կարևոր տեղեկություններ և սովորաբար ներկայացնում են, օրինակ, խորհուրդ որպես զեկույցի մաս» (23. 18): Այդպիսով, փաստեր բացահայտողների դերում հաճախ եկող երրորդ կողմերը բնութագրվում են կոնֆլիկտն ուսումնասիրելու և վիճելի հիմնախնդիրների վերաբերյալ խորհուրդատվական բնույթի կարծիքներ արտահայտելու իրավասություններով: Կոնֆլիկտի վերաբերյալ փաստերի բացահայտմանն ուղղված գործունեություն իրականացնող երրորդ կողմի օրինակ է 2008թ. մարտի 1-ին ՀՀ իշխանությունների և ընդդիմության միջև տեղի ունեցած հետընտրական ապակառուցողա-

կան իրադարձությունների ուսումնասիրության նպատակով ձևավորված փաստահավաք խումբը:

Երրորդ կողմը կարող է հանդես գալ *միջնորդի* (mediator) դերում: Բ. Սուրը համարում է միջնորդին «...Երրորդ կողմ, ով տիրապետում է արդյունավետ բանակցային ընթացակարգերին և կարող է օգնել կոնֆլիկտում գտնվող մարդկանց՝ կոորդինացնել նրանց գործունեությունը և լինել ավելի արդյունավետ բանակցություններ վարելիս» (20, 14): Իսկ Ա. Անցուպովի և Ա. Շիպիլովի կարծիքով, «...ունենալով հատուկ գիտելիքներ, նա ապահովում է խնդրի կառուցողական քննարկում: Վերջնական որոշումը մնում է ընդդիմախոսներին» (6, 522): Այսպիսով, կոչված չլինելով կայացնել կողմերի համար պարտադիր կամ խորհրդատվական բնույթի որոշումներ, միջնորդն աջակցում է կողմերի միջև բանակցություններին և օգնում նրանց՝ ձեռք բերելու վիճելի հիմնախնդիրների վերաբերյալ փոխադարձ ընդունելի համաձայնություն: Ի դեպ, միջնորդի որպես երրորդ կողմի դերն ինստիտուցիոնալացվել է ԱՄՆ-ում, որտեղ մասնագետ-միջնորդները նպաստում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և մակարդակներում առաջացող սոցիալական կոնֆլիկտների լուծմանը (20):

Երրորդ կողմի դերերը դասակարգելիս կարելի է առանձնացնել նաև *օգնականի* կամ *օժանդակողի* (facilitator) դերը: Չնայած երրորդ կողմի այս դերը երբեմն սխալմամբ նույնացվում է միջնորդի դերի հետ, այն բնութագրվում է որոշ առանձնահատկություններով: Փ. Գերրիսի և Բ. Ռայլիի կարծիքով, օգնականը կազմակերպում է կողմերի միջև «...չեզոք տարածքում գաղտնի, ոչ պաշտոնական քննարկում և հարաբերությունների կառուցում, որը չի ենթադրում, որ համաձայնություն պետք է նվաճվի» (14, 107): Փաստորեն, ի տարբերություն միջնորդի, օժանդակողը նպաստում է կողմերի կամ կողմերի ներկայացուցիչների միջև արդյունավետ հաղորդակցություններին, որոնք կարող են չավարտվել համաձայնության նվաճմամբ: Երրորդ կողմի այսպիսի միջամտության օրինակներ են Ստամբուլում Վրաստանի և Զարավային Օսիայի ներկայացուցիչների միջև պարբերաբար տեղի ունեցող հանդիպումները, որոնք կազմակերպվում են Ջորջ Մեյսոնի համալսարանի Կոնֆլիկտների վերլուծության և լուծման դպրոցի պրոֆեսոր Սյուզան Ալլեն Նեմի և Կալիֆորնիայի համալսարանի դոկտոր Պաուլա Գերրի կողմից և նպատակ ունեն շարունակելու 2008-2011թթ. «Տեսակետ» գործընթացը՝ ոչ պաշտոնական, քաղաքացիական դիվանագիտությունը՝ ուղղված երկու կողմերի միջև փոխըմբռնման կառուցմանը 2008թ. օգոստոս ամսին տեղի ունեցած և վրաց-օսական հարաբերությունների վրա աղետալի ազդեցություն ունեցած պատերազմից հետո (11):

Երրորդ կողմի դերերի մեջ գիտնականներն առանձնացնում են նաև *հաշտարարի* (conciliator) դերը: Չնայած գիտական գրականությունում այն հաճախ օգտագործվում է որպես «միջնորդ» և «օգնական» հասկացությունների հոմանիշ, որոշ մասնագետներ երրորդ կողմի այս դերը նկարագրում են այլ կերպ: Այս առումով ուշագրավ է Փ. Յերրիսի և Բ. Ռայլիի սահմանումը, ըստ որի, «հաշտարարն ապահովում է երկու կողմերի միջև հաղորդակցական ուղի: Նա օգնում է վիճելի հիմնախնդիրների բացահայտմանը, կողմերի միջև լարվածության նվազեցմանը և կողմերին՝ դեպի ավելի սերտ ուղղակի փոխազդեցություն շարժվելուն» (14. 112): Վերջինիս դերը կարող է կայանալ նաև «բարի ծառայությունների» տրամադրման մեջ: Մասնավորապես, այս դերը ստանձնող երրորդ կողմը «...կարող է սահմանափակվել, օրինակ, միայն կոնֆլիկտող մասնակիցների միջև հանդիպումների անցկացման համար իր տարածքի տրամադրմամբ կամ հանդես գալ յուրօրինակ «փոստատարի»⁶ դերում՝ հասցնելով հաղորդագրություններ կոնֆլիկտի մի մասնակցից մյուսին» (8. 49): Այդպիսով, հաշտարարի դերում հանդես եկող երրորդ կողմերը նպատակ ունեն խրախուսել կողմերին՝ շարժվելու դեպի ուղղակի բանակցություններ՝ տրամադրելով նրանց գլխավորապես «տեխնիկական» աջակցություն: Հաշտարարի գործունեության օրինակ է Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի միջամտությունը 2008թ. վրաց-օսական հնգօրյա պատերազմին, որը սկզբնական փուլում նպատակ ուներ նպաստելու Ռուսաստանի և Վրաստանի նախագահների միջև անուղղակի հաղորդակցությունների հաստատմանը ու հաղորդագրությունների փոխանակմանը, իսկ ավելի ուշ վերածվեց միջնորդության՝ երկու երկրների նախագահներին բավարարող համաձայնության նվաճմամբ: Հարկ է նշել, որ 2008թ. հունիսի 14-ից ՀՀ-ում գործում է «ՀՀ օրենքը ֆինանսական համակարգի հաշտարարի մասին», որի համաձայն «ֆինանսական համակարգի հաշտարարը» լիազորված է իրականացնել ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն և վերջինիս կողմից կայացված որոշումները հաշտարարին դիմող կողմի համաձայնությամբ կարող են դառնալ կատարման համար պարտադիր (3): Իրականում, «հաշտարարի» գործունեություն որակվող երրորդ կողմի նման միջամտությունը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանի դեր, ով իրավասու է քննել որոշակի՝ տվյալ դեպքում ֆինանսական ոլորտին առնչվող բոլորքներ: Այսինքն՝ այստեղ գործ ունենք «մասնագիտացված» մարդու իրավունքների պաշտպանի դերի հետ,

⁶ Միջազգային հարաբերությունների քննադարձում երրորդ կողմի նման գործելածնը անվանվում է նաև «մաքոբային դիվանագիտություն» (shuttle diplomacy) (6. 525):

ինչպես Շվեդիայում, Նորվեգիայում, որտեղ գործառնում են սպառողների, տնտեսական ազատությունների, ՁԼՄ-ների և այլ հարցերով մարդու իրավունքների պաշտպաններ (7. 90-91):

Դիտորդը (observer) որպես երրորդ կողմ նպաստում է կոնֆլիկտի լուծմանն անուղղակի կերպով: Ա. Անցուլպոլի և Ա. Շիպիլովի մեկնաբանությամբ, «**դիտորդը** կոնֆլիկտի գոտում իր ներկայությամբ ետ է պահում կողմերին ավելի վաղ նվաճված պայմանավորվածությունների խախտումից կամ փոխադարձ ագրեսիայից: Դիտորդի ներկայությունը ստեղծում է պայմաններ բանակցությունների միջոցով վիճելի հարցերի լուծման համար» (6. 522):

Մասնագիտական գրականությունում դիտորդի — դերի առնչությամբ առանձնացվում են «**խաղաղապահ ուժեր**» (peacekeeping forces) և «**ռազմական դիտորդներ**» (military observers) հասկացությունները: Ընդ որում, խաղաղապահ ուժերի խնդիրն է «... *հակամարտող կողմերի բաժանումը, նրանց միջև զինված բախումների չթույլատրումը, հակամարտող կողմերի ռազմական գործողությունների նկատմամբ վերահսկողությունը*», մինչդեռ ռազմական դիտորդների նպատակն է «... *հետևել զինադադարի կատարմանը, բացահայտել դրա խախտման փաստերը և տրամադրել զեկույցներ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ*» (8. 51-52): Երրորդ կողմերի նման միջամտությունների օրինակներ են ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի, ԵԱՀԿ ռազմական դիտորդների առաքելությունները Կոսովոյում և մի շարք այլ կոնֆլիկտային գոտիներում:

Կախված կայացվող որոշման նկատմամբ երրորդ կողմի վերահսկողության մակարդակից՝ մասնագետներն առանձնացնում են նաև **հետազոտողի** (researcher) դերը, ով, անկախ այն հանգամանքից, հանդիսանում է կոնֆլիկտների վերլուծության և լուծման բնագավառի մասնագետ, գիտնական, թե, օրինակ, լրագրող, նպատակ ունի ուսումնասիրել կոնֆլիկտը (16. 27):

Այսպիսով, երրորդ կողմերի քննարկված դերերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավորները, ոստիկանները և պարտավորեցնող արբիտրաժի սահմաններում գործառնող արբիտներն օժտված են կոնֆլիկտի լուծման վերաբերյալ վերջնական որոշումներ կայացնելու, իսկ օմբուդսմենները (օմբուդսանձերը), փաստեր բացահայտողները, չպարտավորեցնող արբիտրաժի սահմաններում գործառնող արբիտները՝ կոնֆլիկտն ուսումնասիրելու և խորհրդատվական բնույթի առաջարկություններ անելու լիազորություններով, մինչդեռ միջնորդները, օգնականները, հաշտարարները, դիտորդները (խաղաղապահ ուժերը, ռազմական դիտորդները) և հետազոտողները չեն բնութագրվում վերոհիշյալ իրավասություններից և ոչ մեկով:

Սինդույն ժամանակ, անհրաժեշտ է նաև նշել, որ երրորդ կողմերի վերոհիշյալ դերերը սովորաբար համդիսանում են պաշտոնական երրորդ կողմերի դերեր, քանի որ դրանք, որպես կանոն, իրականացվում են մասնագիտական գործունեությունների շրջանակներում՝ որոշակի իրավական նորմերի, կանոնակարգերի և էթիկական կոդեքսների պահանջներին համապատասխան: Օրինակ, այդ դերերը, գլխավորապես, պահանջում են երրորդ կողմերից՝ կոնֆլիկտի կողմերի նկատմամբ անկողմնակալության սկզբունքի պահպանում:

Այնուամենայնիվ, երրորդ կողմերի դիտարկված դերերի մեծ մասը կարող են ստանձնել նաև ոչ պաշտոնական երրորդ կողմեր, ում միջամտությունը չի համդիսանում մասնագիտական և, հետևաբար, չի կարգավորվում որոշակի նորմերով: Նման դեպքերում երրորդ կողմերի վերը քննարկված «դերերից» որևէ մեկը կարող է ստանձնել, օրինակ, ծնողը՝ երեխաների միջև ծագած վեճում կամ ղեկավարը՝ ենթակաների միջև կոնֆլիկտում և այլն:

Ինչ վերաբերվում է երրորդ կողմերի քննարկված դերերի ճկունությանն, այսինքն՝ մի դերից մյուսին անցնելու հնարավորությանն, ապա այդ դերերի մի մասը կարող է նախատեսել նման հնարավորություններ (16): Օրինակ, արբիտրները կամ դատավորները, իրենց գործունեության ընթացքում, կարող են ստանձնել նաև «միջնորդի», «հաշտարարի» դեր, իսկ, այնուհետև, վերադառնալ իրենց նախկին դերերին: Սինչդեռ, փաստեր բացահայտողները, միջնորդները, օգնականները, հաշտարարները, դիտորդները և հետազոտողները, ստանձնելով «դատավորի» կամ «արբիտրի» դեր, այնուհետև, ըստ էության, չեն կարող վերադառնալ իրենց սկզբնական դերերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ օրենքը առևտրային արբիտրաժի մասին: ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 8 (532): Երևան: «Տիգրան Մեծ», 2007:
2. ՀՀ օրենքը մարդու իրավունքների պաշտպանի մասին:
<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1457>
3. ՀՀ օրենքը ֆինանսական համակարգի հաշտարարի մասին:
<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2905&Reading=2>
4. Քերոբյան Է.: «Վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների ինստիտուցիոնալացումը հետխորհրդային հայ հասարակությունում»: Երևան, «Գարուն», 2006, 7-8, էջ 112-117:
5. Օրենսդրությունը դատական համակարգում: ՀՀ պաշտոնական տեղեկագիր: Երևան: «Տիգրան Մեծ», 2004:
6. Анцупов А.Я., Шипилов А.И. Конфликтология. Москва: Юнити-Дана, 2002.
7. Дмитриев А. В. Социальный конфликт: общее и особенное. Москва: Гардарики, 2002.
8. Лебедева М.М. Политическое урегулирование конфликтов: подходы, решения, технологии. Москва: Аспект Пресс, 1999.

9. Argyris C. Intervention theory and method: a behavioral science view. Reading, MA. Addison-Wesley Publishing Co., 1970.
10. Augsburg D.W. Conflict mediation across cultures: pathways and patterns. Kentucky: John Knox Press Louisville, 1992.
11. Continuation of the Dialogue Series "Point of View" for Georgian-South Ossetian Mutual Understanding and Trust. http://icar.qmu.edu/press_release_6-22-10_en.html, <http://icar.qmu.edu/press-releases/12093>.
12. Fisher S., Abdi D., Ludin J., Smith R., Williams S., Williams S. Working with conflict: skills and strategies for action. London: Zed Books, 2000.
13. Folger J., Poole M., Stutman R. Working through conflict: strategies for relationships, groups, and organizations. New-York: Addison Wesley Longman, Inc., 1997.
14. Harries P., Reilly B. (ed.) Democracy and deep-rooted conflict: options for negotiators. Ljubljana: International Institute for Democracy and Electoral Assistance, 1998.
15. Hocker J., Wilmot W. Interpersonal conflict. USA: Brown and Benchmark Publishers, 1995.
16. Laue J. "The emergence and institutionalization of third party roles in conflict". // Sandole D., Sandole-Staroste I. "Conflict management and problem solving: interpersonal to international applications". New York: New York University Press, 1987.
17. LrBaron M., Bridging cultural conflicts. San Francisco: Jossey-Bass, 2003.
18. Menkel-Meadow C., Love L., Schneider A., Sternlight J. Dispute resolution: beyond the adversarial model. New York: Aspen Publishers, 2005.
19. Miall H., Ramsbotham O., Woodhouse J. Contemporary conflict resolution: the prevention, management and transformation of deadly conflicts. Cambridge. Polity, 1999.
20. Moore Ch.W. The mediation process: practical strategies for resolving conflict. San Francisco: Jossey-Bass Publishers, 1986.
21. Nolan-Haley J.M. Alternative dispute resolution in nutshell. USA: West Publishing Co, 1992.
22. Sandole D. "A comprehensive mapping of conflict and conflict resolution: A three pillar approach". Peace and Conflict Studies, Vol. 5, No. 2, December, 1998.
23. Volpe M. R., Maida P. R. "Sociologists and the processing of conflicts". Sociological practice, Vol. 10, 1992.